ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

«16» 10 2017 թ.г.

ՆՎԱ/3661

«Էյրենա» ՍՊԸ-ի տնօրեն
Վ. Գասպարյանին
Հասցե՝ ՌԴ, ք. Ստավրոպոլ, Վորովսկու հր. տ 2
Ինդեքս 355000, ԿՊՊ 263401001
էլ. հասցեն՝ oooeirena@yandex.ru
ՀՎՀՀ՝ 2634049190

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էյրենա» ՍՊԸ-ի միջև 23.05.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-9/1-4 և ՇՀԱՊՁԲ-9/2-1 ծածկագրերով գնման պայմանագրերի համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 600 հատ «Նադրոպարին կալցիում nadroparin calcium»՝ 1,617,000 (մեկ միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով և 5000 դեղահատ «Պեֆլօքսացին (պեֆլօքսացին մեզիլատի դիհիդրատ)»՝ 775,000 (յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Հիմք ընդունելով վերը նշված պայմանագրերի 3.1.7 կետերը, 3.1.7.1 կետերի «բ» ենթակետերը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հոկտեմբերի 10-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է ՇՀԱՊՁԲ-9/1-4 ծածկագրով պայմանագիրը և մասնակի՝ «Պեֆլօքսացին (պեֆլօքսացին մեզիլատի դիհիդրատ)» ապրանքատեսակի մասով՝ ՇՀԱՊՁԲ-9/2-1 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Էյրենա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին որպես տույժ փոխանցել 56,595 (հիսունվեց հազար հինգ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ՝ ՇՀԱՊՁԲ-9/1-4 ծածկագրով պայմանագիր մասով և 27,125 (քսանյոթ հազար հարյուր քսան հինգ) ՀՀ դրամ՝ ՇՀԱՊՁԲ-9/2-1 ծածկագրով պայմանագրի մասով՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրերի 7.2 կետերի համաձայն):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Էյրենա» ՍՊԸ-ից կգանձվեն նաև վերը նշված պայմանագրերի կատարման ապահովումների գումարները՝ 673,750 (վեց հարյուր յոթանասուներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ ՇՀԱՊՁԲ-9/1-4 ծածկագրով պայմանագիր մասով և 2,720,898 (երկու միլիոն յոթ հարյուր քսան հազար ութ հարյուր իննսունութ) ՀՀ դրամ՝ ՇՀԱՊՁԲ-9/2-1 ծածկագրով պայմանագրի մասով:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374 10) 29-44-01, Ֆաքս (+374 10) 29-43-12
г. Ереван, 0044, Багреванда 5, Тел.: (+374 10) 29-44-01, Факс: (+374 10) 29-43-12